

Կ. Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տերյանը նկատելի ազդեցություն է ունեցել ոչ միայն հայ պոեզիայի, այլև արձակի վրա: Այս տեսակետից կարելի է առանձնացնել մի քանի անուն՝ Եղիշե Չարենց, Ռեն (Ռուբեն Վարդանյան), Կարեն Միքայելյան, Ստեփան Զորյան, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի:

Եղիշե Չարենցը Տերյանից ժառանգեց իր վեպի վերնագիրը: «Երկիր Նաիրի» շարքն այստեղ դարձավ «Երկիր Նաիրի» պոեմանման վեպ: Սա պատահականություն չէր, պատահականություն չէր նաև վեպի 1926 թ. հրատարակությանը Տերյանից վերցրած այս բնաբանը.

Երկիր Նաիրի, երազ հեռավոր,  
Քնած ես քնուշ թագուհու նման.  
Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման:

Վերջնական հրատարակության մեջ վեպի առաջին գլխին՝ «Քաղաքը և բնակիչները», Չարենցը Տերյանից դրեց «Այստեղ նաիրյանն է նազում» բնաբանը (բնագրում՝ «Այնտեղ»): Ե՛վ վերնագիրը, և՛ այս երկու բնաբանն ինքնին հուշում են Չարենցի տերյանական ներազդեցության շահն ու բնույթը: Այո՛, «Երկիր Նաիրի», ինչպես Տերյանի շարքում է, որպես դարերից եկած «ցնորք», «մորմոք», «հնամյա կարոտ», որպես առասպել: Երկու բանաստեղծներն էլ, Նաիրի ասելով, հասկանում էին հեռավոր հեքիաթը, այն դյուրիշ առասպելը, որ մեր նախնիներից ժառանգել ենք մենք: Այդ առասպելների անդրադարձով Տերյանը ոգեկոչում է Երկիր Նաիրիի ցնորական կերպարը՝

Մշուշի միջից,— տեսի՛լ դյուրակամ,—  
Բացվում է կրկին Նաիրին տրտում...<sup>1</sup>

Ոգեկոչում է պատմությունը, որը դառն ու տխուր բեկումների է ենթարկվում իրականության հայելիների մեջ: Դյուրական տեսիլն անհայտանում է, և մնում է իրական Նաիրիի խոշտանգված կերպարը՝ «Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր»:

Չարենցը ևս առասպելական մշուշից է զալիս և առասպելի նման էլ ներկայացնում Երկիր Նաիրիի խորհրդանշանի վերածված իր հայրենի Կարս քաղաքի հիշարժան վայրերը՝ Բերդը, Առաքելոց եկեղեցին, Վարդանի կամուրջը, հինգ հարկանի շինությունը, երկու բաղնիքները, Սլլան քարը, Ճըգնավորի մատուռը: «Ո՞րը թվեմ:— Բուլդոն էլ հրաշք են, զարմանալի զարմանք, անկարելի հանճարք»<sup>2</sup>,— ոգեշնչված ձայնարկում է նա:

<sup>1</sup> Վահագն Տերյան, Երկերի ժողովածու, 4 հատորով, Երևան, հ. 1, 1972, էջ 244:

<sup>2</sup> Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, 1968, էջ 17:

Այնուհետև Չարենցը ևս դարերի ոգևորիչ մշուշից վերադառնում է իրականութուն և ցույց տալիս այն ողբերգությունը, որ պատահեց դարերի մշուշից եկած այդ առասպել-հեքիաթին: Ինչպես Տերյանն էր «վերջին պոետի» զգացողությամբ խոսում կործանվող Հայոց աշխարհի մասին, այդպես էլ Չարենցը, իրոք «վերջին պոետ» դարձած, պատմում է շարաշար պարտությանը թշնամուն թողած Կարսի մասին: Նույն «վերջին պոետի» զգացողությունը նա բացահայտորեն ունենում է «վերջին զոհի» ինքնակիզումով («Մահվան տեսիլ», 1920): Երկուսի առջև խորտակվում էր դարերի երգանքը և Երկիր Նաիրիի մտապատրանքը նորից վերածվում էր մշուշի ու առասպելի, միայն այս դեպքում ոչ թե ժառանգած անցյալից, որովհետև այդ ժառանգությունը անէացավ, այլ կտակած ապագային՝ որպես մի նոր հարություն հույս: Տերյանը շէր հանձնվում կործանարար տարերքին և հույսի ջահեր էր վառում:

Ուխտավոր անդու, դարերի ժառանգ  
Մի ձեզ մարտի գնում եմ անկանգ.—  
Թող գուժկան գիշերն ահաւաստ դավե—  
Որքան մալը սև՝ ալքքան ես համառ,  
Երկիր, իմ երկիր, հավատով անմար,  
Մտքը է քո ալիքն և պատկզ վեհ...<sup>3</sup>

Այնուհետև՝

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,  
Զրահավորվիր խանդով խնդազին,  
Վառիր երկունքի գիշերում խավար  
Հրով մկրտված մարտյան հոգին...<sup>4</sup>

Նույնը և Չարենցը: Ամենաժանր պատկերներ նկարագրելուց և ամենաանհուսալի ասպրամներ ունենալուց հետո, նա, ի վերջո, ուժ ու կորով է գտնում իր մեջ ժողովրդին ապրեցնող խոսք ասելու: Տերյանը համատարած անհուսության մեջ էր հույսի նշույլ որոնում, իսկ Չարենցի համար, այսպես թե այնպես, կար Հայաստանի պահպանված մի հատվածը: Վեպի «Վերջարանում» Չարենցը գրում է. «Ընթերցո՛ղ: Վաղուց հետե մեր գրականության, մանավանդ բանաստեղծության մեջ չկա՛ մի բառ, որ ավելի հոյովվեր, քան «Նաիրի» գոյականը... Արյուն, ճիշտ է, շատ է հոսել, սակայն կենդանի մնացածներից շատե՛ն... այսօր իրենց երկիրն են շինում— մի երկիր, սակայն, որի գոյական լինելը ճշտելու համար կարիք չկա դիմելու ոչ մի Մանուկ Աբեղյանի...»<sup>5</sup>:

Փաստորեն Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի ամբողջ հայեցակարգն ընկած է Չարենցի վեպի հիմքում՝ ընդգրկելով թե՛ կառուցվածքը և թե՛ փակուղուց ելք որոնելու ճանապարհը: Ազդեցությամբ հանդերձ սա նաև ժամանակակից մարդկանց ընդհանուր հայացք էր՝ ուղղված իրականությանը, անցյալին ու ապագային: Այդ ընդհանրության հիմքը ժամանակն է և հայացքների նույն ուղղվածությունը:

Ասացինք, որ Տերյանը որոշակի ազդեցություն է թողել նաև Ռենի (Ռուբեն Վարդանյան), Կարեն Միքայելյանի և Ստեփան Զորյանի ստեղծագործության վրա: Այդ ազդեցությունը հատկապես առկա է նրանց լեզվի, խոսքի գեղարվեստական միջավայրի, նյութի և հերոսի ընտրության հարցում:

Ստեփան Զորյանը անձամբ ծանոթ էր Տերյանին, և այդ ծանոթու-

<sup>3</sup> Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 241:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>5</sup> Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 272—273:

թյունը մեծապես նպաստել է նրա գրական ուղու ձևավորմանը: «Մթնշաղի անուրջները», ինչպես հիշում է Զորյանը, «... գավառական պատանուս վրա բուրբուխը: Նոր, անսովոր տպավորություն արավ թե իր թարմ պատկերներով և թե հղկված ու հստակ լեզվով... Մյուս կողմից, ամենակարևորը,— ինձ համար նոր էին բանաստեղծի ապրումները»<sup>6</sup>: Ուրեմն՝ նոր պատկերներ, լեզու, ապրումներ, որոնք էլ դարձան այն հիմքը, որի վրա ձևավորվեցին Զորյանի գրական նախասիրությունները: Անձնական ծանոթությունը կայացել է 1914-ին «Մշակի» խմբագրատանը, ապա ամրապնդվել նույն թվականին «Հայ գրականության» գալիք օրը» դասախոսության առիթով: Թե՛ դասախոսության մեջ, թե՛ կյանքում Տերյանը պնդում էր, որ հայ գրականությունը շատ է ետ մը-նացել գեղարվեստական մտքի համաշխարհային ընթացքից և պետք է «թափ տալ, նոր հունի մեջ դնել գրական գործը: Մի թարմ հոսանք, մի նոր շարժում պետք է առաջ բերել մեր կանգ առած գրականության մեջ»,— ասում է նա՝ ցանկանալով հիմնավոր նորոգել հայ գրական լեզուն, արվեստը, մի խոսքով՝ «ստեղծել գրականության նոր որակ»<sup>7</sup>: Հենց Տերյանն էլ 1916-ին Զորյանին առաջարկել է կազմել պատմվածքների ժողովածու «Պանթեոն» հրատարակչությամբ լույս ընծայելու համար: Հասկանալի է, որ Տերյանի հետ գրական զրույցները ինքնին պիտի կրթեին Զորյանի ճաշակը, և նա պիտի այնպիսի գիրք ներկայացներ, որը համապատասխաներ Տերյանի ընդհանուր բարենորոգչական տրամադրություններին: Այդպես էլ լինում է: Տերյանը շրջ օրում ծանոթանում է Զորյանի գրքին, առաջարկում հրատարակել, խոստանում, որ ինքն էլ կգրի առաջաբանը: Տերյանը Զորյանին հանձնարարում է թարգմանել նաև և՛ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի 2-րդ հատորը: Թարգմանական գործունեությունը ևս մտնում էր նրա ընդհանուր բարենորոգչական ծրագրի մեջ: Տոլստոյի վեպի թարգմանությունը Զորյանը իրականացնում է շատ ավելի ուշ, բայց ամբողջական ընդգրկումով (հ. 1, 1935, հ. 2, 1936, հ. 3, 1937, հ. 4, 1940):

Պատերազմը խանգարեց, և Տերյանը չկարողացավ կատարել Զորյանին տված խոստումը: Զորյանի առաջին գիրքը՝ «Տխուր մարդիկ» (պատմվածքներ, հատոր 1) լույս ընծայեց Թիֆլիսի «Պատանի» հրատարակչությունը, իսկ առաջաբանը գրեց Նիկոլ Աղբալյանը:

Զորյանի ստեղծագործության մեջ տերյանական ներկայությունը նկատելի է պատմվածքների առաջին երեք ժողովածուների մեջ: «Տխուր մարդիկ» ժողովածուի հետ պետք է հիշվեն «Ցանկապատը» (պատմվածքներ, հատոր 2, 1923) և «Պատերազմը» (պատմվածքներ, հատոր 3, 1925): Անդրաշառնալով Զորյանի առաջին գրքին՝ Դ. Դեմիրճյանը հետևյալն է ասել. «Այս գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության և եվրոպական գրական ձևերի սինթեզ, ինչ պակասում էր մեզ մինչև այժմ»<sup>8</sup>: Տերյանից եկող ճաշակը, ահա, այս եվրոպականացումն է, հեռացումը գավառականությունից և գավառամտությունից, նաև բարբառից ու սահմանափակ հոգեբանական միջավայրից: Տերյանը գրականության եվրոպականացման պահանջ էր դրել: Մի բան, որի հանդեպ անտարբեր չէր նաև Զորյանը: Ասածի վկայությունը նրա հիշյալ երեք ժողովածուներում գետեղված գործերն են: Եվրոպականացումը նշանակում էր ոչ թե հեռացում ազգայինից, այլ բարձր ճաշակ, բարձր որակ և բարձր պահանջկոտություն: Այսինքն, ինչպես Տերյանը կասեր՝ «Պետք

<sup>6</sup> Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. 10, Երևան, 1964, էջ 165—166:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 168—169:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 542:

է այս կեղևից դուրս գալ: ... Պետք է ավգային հանդերձով տալ մարդը: Բայց ոչ թե ավգային հանդերձ՝ առանց մարդի»<sup>9</sup>: Հետամնացութեան հաղթահարում, գրական բարձր կուլտուրա՝ ահա Տերյանի պահանջը, որը հոգեհարազատ էր նաև Զորյանին: Իսկ դա պիտի արտահայտվեր նյութի ընտրութեամբ, նյութի ներքին հոգեբանական հարստութեան բացահայտմամբ և համապատասխան լեզվական մակարդակով: Մեծ բանաստեղծին նվիրված երկու հուշագրությունների մեջ էլ՝ «Տերյան», «Տերյանի մահը», Զորյանը առանձին նշանակութեամբ է մտաբերում Տերյանի լեզվական դատողությունները, և ինքն էլ հարկ նշած դեպքում գնահատում Տերյանի լեզուն: «Մի լեզու, որ բնավ նրման չէր մինչ այդ եղած մեր պոետիկ լեզվին— այնքան հետու էր գավառական երանգից և այնքան նուրբ ու պայծառ, որն ստեղծվել էր կարծես հատկապես նվիրական, ինտիմ զգացմունքներ արտահայտելու համար: Նա ինձ թվում էր մի այլ աշխարհի լուսեղեն լեզու»<sup>10</sup>:

Արդեն, իսկ հասկանալի է, որ այսպիսի լեզու գործադրող հեղինակը պիտի կտրականապես դեմ լիներ լեզվի գավառականացմանը՝ «հրամայական պահանջ համարելով լեզվի նրբացման ու ճոխացման խնդիրը»<sup>11</sup>:

Այս պահանջների հասցեատերը գրական ասպարեզ մտնող նոր սերունդն էր, որի վրա էլ հենվում էր Տերյանը: Այդ սերնդի ներկայացուցիչներից էր Զորյանը: Նա ոչ միայն վայելել է Տերյանի մտերմությունը՝ զրոսնել նրա հետ, ժամերով զրուցել Քիֆիսի «Մի բաժակ թեյ» թեյարան-սրճարանում, այլև նամակագրական կապ է ունեցել նրա հետ: Պահպանվել է Զորյանին հասցեագրված Տերյանի հինգ նամակ՝ գրված 1917 թ. հունվարի 8-ին, փետրվարի 11-ին, հունիսի 8—10-ին, օգոստոսին, սեպտեմբերին: Դրանցից մի քանիսը գործնական բնույթ ունեն: Տերյանը նաև գրում է, որ ստացել է և Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի թարգմանության մի մասը, բայց «թարգմանությունը դեռ նայելու ժամանակ չեղավ: Մոտ օրերս կկարդամ և կգրեմ իմ դիտողությունները»<sup>12</sup>: Այնուհետև՝ «ժամանակ չի եղել Ձեր թարգմանությունը կարդալու, մանրամասն գրելու: Մոտ օրերս կգրեմ: ... Դուք ուղարկեցեք շարունակությունը»<sup>13</sup>: Տերյանն այդպես էլ չհասցրեց գրադվել Զորյանի կատարած թարգմանությամբ: Իսկ Զորյանի առաջին գրքի առաջաբանը, ինչպես ասացինք, գրեց Նիկոլ Աղբալյանը և, նրան դիտարկելով այն շրջանակի մեջ, որ ձևավորել էին Ռենը և Կ. Միքայելյանը, գրում է, որ նրանք «Արտաքին իրականությունը հասկանալու և պատկերելու հակում ունեն..., դեմքեր, դեպքեր ու կացություններ չեն հնարում, այլ իրոք պատահածը, իսկապես եղածն աշխատում են հասկանալ և մեկնել ներապրումով»<sup>14</sup>: Թեև Զորյանի մասին Աղբալյանն օգտագործում է «համեստ շնորհք», «թե գրական շնորհքը և թե արվեստը մեծ չեն» արտահայտությունները, բայց նաև գրում է, որ «տիրանում է իր նյութին և մշակում է խնամքով», «կշռել գիտե բառերի ներքին արժեքը»<sup>15</sup>: Սրանք պատահական արտահայտություններ չեն: Այսուհանդերձ, թեկուզ Աղբալյանի խոսքի համեմատությամբ հետաքրքիր կլինեն կարդալ հենց իր՝ Տերյանի կարծիքը երիտասարդ արձակագրի մասին:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 173:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 165—166:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>12</sup> Վահագն Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979, էջ 318:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 321:

<sup>14</sup> Նիկոլ Աղբալյան, Գրական-քննադատական երկեր, 4 հատորով, հ. 2, Բեյրութ, 1966, էջ 240:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 239—246:

Ակսել Բակունցի ստեղծագործությունը Տերյանի գրական դպրոցի շրջանակներում հիշելի է մի քանի հարցադրումներով՝ իրականության գեղարվեստական ընկալում, իրականության ընկալման ու վերարտադրման արվեստ:

Հայաստանի գեղարվեստական կերպարը 19-րդ դարի հայ գրականության և հրապարակագրության մեջ ստեղծվել էր հերոս նահատակի լուսապսակով: Տերյանն առաջիններից էր, որ փորձեց իր երկիրը ճանաչել իրատեսությամբ, այնպես, ինչպես կա և Հայաստանի իրական կերպարը հակադրել ազգային ողբերգության սնուցած հայրենասիրությանը: Փոխվել էին ժամանակները. աչքի առաջ, ինչպես Չարենցը կասեր, «Մեր կյանքի հիմերը անդունդը ընկան», այլևս հնարավոր չէր ազգային ողբերգության բավարարել ժողովրդին: Անհրաժեշտ էին իրական խոսքեր: Տերյանն առաջիններից էր, որ հայրենիքի համար գտավ իրական խոսքեր: Եվ հենց այդ հայրենասիրական բանաստեղծություններում է, որ նրա խորհրդապաշտությունը անցում է կատարում իրապաշտության: Ի՞նչ էր Տերյանի պատկերածը՝ ժողովրդի տխուր, անապահով կյանքը, այդ տխուր կյանքից ծնված հոգու անխինդ երգը, նրա անապահով ու անկայուն վիճակի պասսիվներ՝ ոչ թե դղյակներ ու պալատներ, այլ խարխուլ խուղեր: Ասվածի վկայություններն են Տերյանի «Այնպես անխինդ են և նման լացին», «Հայրենիքում իմ արնաներկ», «Դու հպարտ չես, իմ հայրենիք», «Ինչպես շրտիրեմ, երկիր իմ կիզված», «Բարակիրան նախուհին ինձ ժպտաց» և համանման այլ բանաստեղծություններ: Ահա դրանցից մեկը.

Դու հպարտ չես, իմ հայրենիք,  
Տրտում ես դու և իմաստում,  
Կիզում է քեզ մի հուր կմիք,  
Մի հրմայող ու հիմ խոստում:  
Եվ մի՞թե այդ վշտիդ համար  
Ձեմ սիրում քեզ այսպես քնքուշ  
Եվ խոնարհվում քեզ պես համար,  
Օ, հայրենիք դառն ու անուշ:  
Չըշացա խնդուն փառքիդ  
Անցյալ ու հիմ փալով երբեք.—  
Միրևցի հեզ, անքեն հոգիդ  
Եվ երգերդ մեղմ ու քեկրեկ,  
Խեղճությունը խավար ու լուռ  
Աղոթքներդ դառն ու ցավոտ,  
Չանգակներիդ զարկը տխուր  
Եվ հուշերիդ լույսերն աղոտ...<sup>16</sup>

Հայրենի եզերքին ուղղված այս հայացքը ամբողջովին հոգեհարազատ էր Բակունցի պատմվածքներին: Դա առկա է նույնիսկ նրա գրական առաջին քայլերի մեջ, որի արտահայտությունը երեք քնարական պատկեր է՝ «Աղոթք», «Աղոտը», «Անտառում»: Բակունցը դրանք գրել է 1918-ին և նույն թվականին տպագրել Երևանի «Ժողովուրդ» լրագրում, որին աշխատակցում էր: Ինքը որպես կամավոր 1917—1918-ին կռվել էր հայրենիքի փրկության համար: Բայց փրկության փոխարեն պարտությունն էր ուղեկցում: Բակունցը տեսավ Կարինի, Երզնկայի, Տրապիզոնի անկումը: Ինքն անձամբ մասնակցել է Աշկալայի, Իլիչայի, Արդահանի, Սարդարապատի ճակատամարտերին: Ահա այդ շրերի տպավորությունների գեղարվեստական շարադրանք են այդ երեք պատկերները, որոնցից հատկապես շատ հուզիչ է «Աղոթքը»: Հիշենք, որ այդ վերնագրով բանաստեղծություններ ունի նաև Տերյանը: Ապա ավելացնենք, որ

<sup>16</sup> Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 243:

աղոթքը խորհրդապաշտուծյան կարևոր ինքնարտահայտման ձևերից մեկն էր, քանի որ աղոթքը մարդուն կտրում էր երկրային կյանքի կոշտ ու կոպիտ իրականությունից և տանում դեպի հոգու մեկ այլ աշխարհ: Եվ երկրորդ, խորհրդապաշտներն այն կարծիքի էին, որ բանաստեղծությունը, որպես հոգու մաքուր խոստովանություն, պետք է նմանվի աղոթքի կամ վերածվի աղոթքի: Ահա այդ հոգեկան ապրումներով էլ Բակունյը հյուսում է իր «Աղոթքը»:

«Միայն քեզ Տե՛ր, միայն Քեզ եմ աղոթում:

Ընդունիր, Տե՛ր, իմ աղոթքը— սրտիս խորքերից բխած, թող Քեզ հաճելի լինեն իմ տանջված հոգու մրմունջները, և աղերսանքս մի մերժիր, Տե՛ր:

... Խաղաղություն տուր երկրին, թող ծաղիկները բույր տան, թող առաջվա պես առունները կարկաչեն, և աստեղազարդ երկնքի տակ մարդիկ գովքդ մրմնջան, աղոթեն Քեզ:

Ամայի դաշտերում գայլերն են ոռնում, մենավոր շիրիմներն են աղերսում Քեզ: ... Տե՛ր, հազարավոր մատաղ կյանքեր մահացան, երազներ տրորվեցին, խինդն անցավ, և արցունքներից մեր աչքերը կուրացան: Ի՞նչ եղան: Ի՞նչ եղան հին երգերը, ո՞վ է այն անգութը, որ խլեց բոլորը, հրդեհեց և հոգիները ամայի, ավերակ դարձրեց»<sup>17</sup>:

Բակունցի ստեղծագործությունը Տերյանի արվեստին հարազատացնում է նաև այն լուռ թախիծը, որը հոգու խորքից գալիս, ստեղծում է մի առանձնահատուկ մթնոլորտ և դրա մեջ ներգրավում թե՛ ամբողջ նյութը, թե՛ բնաշխարհի նկարագրությունը և թե՛ հերոսների կյանքն ու կենցաղը: Իրար լրացնող երանգներ ունեն աշնան բնապատկերները. համեմատության մեջ կարելի է դնել Տերյանի «Ոսկեհանդերձ եկար և միգասքող» բանաստեղծությունը և Բակունցի «Միրհավ» պատմվածքի սկիզբը. «Աշուն էր, պայծառ աշուն...»: «Պատկերի հիմքը զգացողությունն է, հոգեկան ապրումների այն աշխարհը, որը որոշակի դրսևորումներով իր վերաբերմունքն է արտահայտում իրականության հանդեպ: Տերյանը գրում էր.

Լինեի չորան սարերում հեռու,  
Փայր անցնեիր վրանիս մոտով,  
Իրար նայեինք անուշ կարոտով,  
Քնքուշ ժրպտալինք հանկարծ իրարու:  
Գնայիր աղբյուր ու ետ դառնայիր,  
Քեթև, որպես վիթ էլնեիր ձորից,  
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից  
Ու վրանիս մոտ հանգստանայիր:  
Եվ վերջապես մի օր, օ, մի օր,  
Մանիշակագույն սարերի լանջին  
Բացվեինք իրար խոսքերով չնչին,  
Բայց ովտը լինեք անխարդախ ու խոր:  
Ու երբ գնայիր, գիշերըս անքուն  
Դառնար գալիքի մի թովիչ խոստում,  
Ու վառվեք հոգիս պարզ ու իմաստում  
Իմ վերանի տակ, սարերի գրկում...»<sup>18</sup>

Մի՞թե նույն հոգեբանական վիճակի արտահայտությունը չեն Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի այս տողերը. «Սոնան ամառը քաղհան է արել, կուացել է, մատները փուշը ծակել է, հնձվորի համար ճաշ է բերել շալկով, քրտնել է արևի տակ, և քրտնքից շապիկը փակչել է լանջին: Լիներ, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, տերտերանց արտը հնձեր, և Սոնան

<sup>17</sup> Ակուն Բակունց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հ. 2, Երևան, 1979, էջ 10—11:

<sup>18</sup> Վահագն Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1978, էջ 42:

ճաշ բերեր իրեն, շապիկը քրտնեւր և քրտնած նստեր կողքին»<sup>19</sup>: «Լինեի շաբան...», «Լինեի, այնպես լինեի...»՝ սա նույն երազանքն է, կարոտի նույն կանչը, որ տարածվում է հայրենի բնաշխարհի և այդ բնաշխարհի զարդը հանդիսացող կնոջ վրա: Ի վերջո, պատահական չէ, որ «Երկիր նախրի» շարքում Տերյանի «բարակիրան նախրուհու» կարոտն է տանջում, որին նա այսպիսի տողեր է հասցեագրում.

**Բարակիրան Գաիրուհին ինձ ծպտաց,  
Նաիրուհին տխուրաշյա և համեստ.  
Այնքան վատ էր լեռնադատեր դեմքը բաց,  
Նայվածքն այնպես հրեղեն ու անարվեստ...»<sup>20</sup>**

Լեռնադատեր այս կերպարը հենց նա է, որ մարմնավորվել է Բակունցի ստեղծագործության մեջ: Տերյանի հերոսուհու կողքին կանգնում են Բակունցի Խոնարհ աղջիկը, Սոնան, «Ալպիական մանուշակի» քրմուհու պես ծխի քուլաների մեջ զուշակություններ անող գեղեցկուհին: Սրանք նույն կերպարի տարբեր սրտահայտություններ են: Ընդ որում, ինչպես Տերյանի հիշյալ բանաստեղծության մեջ, այնպես էլ Բակունցի «Ալպիական մանուշակում» կա համեմատության նույն եզրը: Մեկի համար «լեռնադուստրը» հիշվում է հյուսիսային ցուրտ հեռուների, հետևաբար՝ ցուրտ սերերի հարաբերությամբ, մյուսի համար «լեռան աղջիկը» արթնացնում է ծովափնյա հուշեր, դարձյալ հեռու...

Հուշերի մեջ Զորյանը նաև գրում է այն մասին, որ Տերյանը «ծրագրում էր գրել արձակ, պատկերել գյուղի կյանքը: Ասում էր, որ դա մի շատ հետաքրքրական գիրք կարող է լինել՝ ժողովրդի նախապաշարումներով, առանձնահատկություններով ու հոգեբանությամբ: Պատմեց անգամ մի դեպք, թե ինչպես երեխաները մտնում են մի գոմ և վախենում սատանաներից... Այդ պատմության մեջ հատուկ ուշադրություն էր դարձնում նրանց ապրումների և հոգեբանության վրա»<sup>21</sup>: Այս խոսքերը կարծես Բակունցի համար ասված լինեն, որովհետև այն, ինչ ցանկացավ, բայց չհասցրեց իրականացնել Տերյանը, իր «Մթնաձոր» գրքով արեց Բակունցը: Նույն նախապաշարումները, տեղական առանձնահատկությունները, ապրումների և հոգեբանական խորությունը: Բակունցն իր գործունեությունն սկսեց Տերյանի օրոք և նրա: շարունակեց ճիշտ այն տեղից, որտեղից նա պետք է ընթացք տար իր գրական գործունեության մի նոր ասպարեզին: Արձակագիր Բակունցը եկավ յուրովի լրացնելու արձակագիր Տերյանի բաց մնացած տեղը:

Բակունցի համար Տերյանը նաև հայոց լեզվի օրենսդիր էր, որի հանդեպ սակայն գործնական և տեսական առումներով նա տարբեր դիրքորոշումներ է ունեցել:

Տերյանի գրական ազդեցությունն այս կամ այն չափով կրել են նաև հիշյալ մյուս արձակագիրները:

Ռեներ (Ռուբեն Վարդանյան) 1910-ական թվականներին տպագրած պատմվածքներում, մասամբ հարելով նաև խորհրդապաշտությանը, բերում էր քաղաքային կյանքի այնպիսի պատկերներ, հոգեբանական այնպիսի իրավիճակներ, նաև գործադրում էր այնպիսի գրական լեզու, որ բնութագրական էր Տերյանով շնչող գրական միջավայրին: Այդ պատմվածքների մի մասը նա ի մի բերեց «Թափառաշրջիկներ» (1927, Բոստոն) ժողովածուի մեջ: Թե այդ

<sup>19</sup> Ակունց Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1976, էջ 408—409:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 252:

<sup>21</sup> Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 171:

գրքում, թե մամուլում տպագրվածներից կարող ենք առանձնացնել «Շրջմու-  
յիկներ», «Կին», «Շիշկինի սերը», «Քաղցածներ», «Գաղտնի ոստիկանը», «Ա-  
հարեկիչը», «Հյուրանոցում», «Իերձակուհին» պատմվածքները:

Տերյանի գաղափարակիրն ու գրական ղեկակիրն էր Կառնե Միֆայել-  
յանը: Նրանք միասին Մոսկվայում 1919—1912 թթ. հրատարակում էին «Դա-  
րուն» ամսանախը, մշակում հայ գրականության ընդհանուր բարենորոգման  
ծրագրեր, զարկ տալիս թարգմանական գրականությանը: Տերյանը բազմա-  
թիվ նամակներ է հասցեագրել Կ. Միքայելյանին, որոնք ընդգրկում են 1910 թ.  
25 հունիսի— 1917 թ., 9 սեպտեմբերի ժամանակահատվածը: Դրանցում նա  
խոսում է գրական բարձր պահանջների, պրոֆեսիոնալիզմի, թարգմանական  
գրականության և ընդհանուր գրական հարցերի մասին: Խոսելով իր գրական  
սերնդի առաքելության մասին՝ 1915 թ. մարտի 12-ին Պետերբուրգից հղած  
նամակում Տերյանը այսպիսի դատողություններ է անում. «... Մեզ վիճակ-  
ված է ինչ-որ, եթե և փոքր, սակայն նոր ու թարմ հոսանք մտցնելու մեր  
մեռնող գրականության մեջ»<sup>22</sup>: Այդ նպատակով նա առաջարկում է ունենալ  
«սեփական թերթ», որը, դարձյալ ըստ նրա, «պիտի լինի մոտ 80 երեսից  
բաղկացած ամսագիր»<sup>23</sup>: Այս ընդհանուր գործունեության մեջ էլ Կ. Միքա-  
յելյանը յուրացրել է տերյանական շունչն ու երանգները և դարձյալ, առաջին  
հերթին, պատկերվող նյութի և լեզվական արտահայտության մեջ:

Գուրգեն Մահարու արձակում Տերյանի ներկայությունն անհամեմատ  
ավելի քիչ է ու աննկատ, քան պոեզիայում: Այդուհանդերձ, Տերյանի խոսքի  
ընդհանուր կուլտուրան ևս տեղ ունի նրա վիպակներում ու «Միրո, խանդի և  
նիցցայի պարտիզպանների մասին» պատմվածքների ժողովածուի մեջ: «Ման-  
կություն» և «Պատանեկություն» վիպակներում իշխում է Տերյանի «Երկիր  
Նաիրի» շարքի նույն անդրադարձը, ինչ Զարենցի վեպում: Դարձյալ առաս-  
պել ու դարձյալ իրականություն, որոնց բախումն էլ ստեղծում է հայրենիքի  
ողբերգությունը: Այն, ինչ տեսավ, ապրեց և պատկերեց Մահարին, ցանկա-  
նում էր գեղարվեստորեն պատկերել նաև Տերյանը: Զորյանի հուշերից հայտ-  
նի է դառնում հետևյալը. «Նա լսեցի, որ նա մի պոեմ է սկսել Վանի հերո-  
սական պաշտպանությանը նվիրված ու մի օր հետաքրքրվեցի, թե ի՞նչ վի-  
ճակում է այդ պոեմը: Նա ժպտաց և հայտնեց, որ, այո, այդպիսի փորձ  
արավ, բայց բան դուրս չեկավ»<sup>24</sup>: Այնուհետև՝ «... Հայկական կոտորածները  
և ցարական հրամանատարության շպատճառաբանված նահանջները Վանից՝  
գրեթե մարեցին հայության հույսերը: Տերյանը այդ ժամանակ «Գործ» ամ-  
սագրում տպեց երկու սոնետ»<sup>25</sup>: Այդ սոնետներից մեկն սկսվում է այս տո-  
ղերով.

Հայրենիքում իմ արհամարհ  
Մայիսի իջավ անլույս ու լուռ.  
Այնտեղ, ուր կար այնքան սիրերդ  
Եվ վարդի բույր, և սրտի հուր:  
Ամեն մի միտք հիմա մի վերք.  
Ամեն հայացք հատու մի սուր,  
Արճուտ դիերն են համր ու մերկ  
Նայում երկինք անգոր ու գուր...<sup>26</sup>

Հետագայում «Մայիսն իջավ»՝ դարձել է «Գիշերն իջավ»: Մայիս ամիսը

<sup>22</sup> Վահագն Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 188:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>24</sup> Սեփական Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 178:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 349:

<sup>26</sup> Վահագն Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 242:



նշելով՝ Տերյանը ականարկում էր Վանի նահանջը մայիսին: «Մայիսը» դարձնելով «գիշեր»՝ պատկերը դարձրել է ավելի ընդհանրական:

Այս երկու փաստերն էլ վկայում են, որ Տերյանը հայրենիքի դառն օրերի պատմությունը ապրել է որոշակի դեպքերի շղթայի մեջ և ոչ թե ընդհանրապես կամ փիլիսոփայորեն: Իսկ այն, ինչ վերաբերում է Վանին, թանկ ու հարազատ էր նաև Մահարուն, որը հայրենի քաղաքի կյանքը, կենցաղն ու ողբերգությունը պատկերեց թե «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին» վիպակներում և թե ավելի ուշ գրած «Այրվող այգեստաններ» վեպում: Ինչպես Բակունցը, այնպես էլ Մահարին ասես իրականացրին Տերյանի անկատար թողած ծրագրերը:

**К. Д. ГАСПАРЯН — Ваан Терян и армянская проза**— Ваан Терян имел заметное влияние не только на армянскую поэзию, но и в решительной мере на армянскую прозу. Оно особенно явно проявилось в романе Чаренца «Страна Наири», в рассказах Карена Микаеляна, Степана Зоряна, Аксея Бакунца, Рена, Гургена Маари. Объединяет эти произведения духовный образ Армении и пристальное внимание к психическому состоянию человека времени. Терян стремился к безупречности литературного армянского, к общеевропейскому уровню художественного изложения, что прослеживается и в произведениях его последователей.